

ու հանդիստ կեանքը վարելէ յետոյ, երբ մարմնոյն բոլոր գործարաններուն առողջապահական հաւասարակշռութիւնը վերահաստատուի, կրնաք մոռնալ խրատներս ու ապրիլ ամէն անձի պէս:

Բայց որչափ ուշ մոռնաք, այնքան աղէկ է:

ԲԺ. Գ. ՔՕԼՈՒԵԱՆ

ՄԱՂԵՐՈՒՆ ՏԱՄՆԵԲԱՆԵԱՆ

1. Կիներուն վերագրուած «Մաղը երկայն, խելքը կարճ» առածը գիտական հիմունք չունի: Մանաւանդ որ ներկայիս կիներուն մազերը կարճ խուզուած են:

2. Մաղերուն ճերմկիւր տարիքի հետ կապ չունի Սակայն, ծերերուն մազերը կը ճերմկին, որովհետեւ մազին գոյն տուող ծծմբային աղերը կը կորսնցնեն իրենց տարրաբանական հանգամանքը:

3. Մաղերուն գանգուր ըլլալը իրենց կազմէն կախում ունի: Ուղիղ մաղերուն իրանը կ'ընդունի է, իսկ գանգուր մաղերունը հակթածեւ: Մաղայարդարներուն «Մնայուն գանգուր» (ondulation permanente), կոչուածը իրենց քսակին եկամուտը միայն կ'աւելցնէ, որովհետեւ մնայուն չէ: Մի քանի ամիս վերջը կ'աւրուի: Սակայն, յաճախորդին վճարածը մնայուն է:

4. Հերթափութեան գլխաւոր պատճառը թեփն է, չոր կամ իւղոտ, որ յաճախ սափրիչներուն խանութէն կուգայ թառելու համար մեր խելապատակը չըջապատող մաղերուն վրայ: Ֆրանկախտի, թիֆոյի և օձախտի պէս հիւանդութիւններն ալ մաղերուն թափումին պատճառ կը դառնան:

5. Ճաղատութեան համար ծանուցուող դեղերը եթէ իսկապէս օգտակար ըլլային, ներկայիս ճաղատ հարուստներու չպիտի հանդիպէինք: Ճաղատ միլիոնատէրներուն թիւը աննշան չէ:

6. Մաղերուն գոյնը նոյնը չի մնար: Շիկահեր ծնած մանուկներ վերջը սեւահեր կրնան ըլլալ:

7. Իւղոտ մաղերը շաքաթը երկու անգամ օճառով լուալու է: Չոր մաղերը շաքաթը մէկ անգամ օճառով լուալու է:

8. Մաղերուն կարճ կտրուիլը և ձեռքով չփոճմը մաղերուն արմատները կը զօրացնեն և անոնց աճումին կը նպաստեն:

9. «Քէլը» և «սաչ գրրան» կոչուած մաղային հիւանդութիւնները Ք. ճառագայթներով կարելի է արմատապէս դարմանել:

10. Ոջիւր սպաննելու համար քարիւղը (կազ եալի) օգտակար է: Քացախը անիծները կը փճացնէ:

ԲԺ. Ա. ԱԲԷԼԵԱՆ